ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

Կ. Պոլիս, 12 հոկտեմբերի

Հանդիսաւորապէս տօնվեց հայկական տառերի գիւտի 1500-ամեայ յօբելեանը հայոց պատրիարքարանի նախաձեռնութեամբ։ (Հ. Գ.)

—

Կիշինեվ, 13 հոկտ.

Սկսվեցին Բեսարաբիայի հայերի տօնակատարութիւնները հայկական տառերի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի առիթով։ Ի յաւերժացումն դպրոցական ֆոնդի՝ Կիշինեվի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսը նուիրաբերեց հարիւր հազար ռուբլի։ (Հ. Գ.)

---

*) Բենիկ վ.-ի քարոզի բովանդակութիւնը կը տանք հետեւեալ համարում։ Խմբ.

Համազգային մեծ յոբելեանի առիթով Թիֆլիսի Նահանգի վրաց ազնուականութեան պարագլուխ Աբխազին ուղարկեց Էջմիածին հեռաձայն հեռագիրը Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունով.

«Հայկական տառերի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400-ամեայ ամենանշանաւոր կուլտուրական տօնի հանդիսաւոր օրերում թոյլ տուէք մատուցանել Ձերդ Սրբութեանն ու հանուր հայ ժողովրդին խորին յարգանքի զգացմունքներս, որ տածում ենք առ հաղարամեայ հարանութիւնի և եղբայրների մեծ անցեալը։ Հայ եկեղեցու սուրբ հայրերի՝ կաթողիկոսների լուսաւոր զեկավարութեամբ Ձերդ Վեհափառութեան հօտի ապագան արժանի կը լինի փառաւոր անցեալի կուլտուրական արի գործերին։ Թիֆլիսի Նահ. ազն. պարագլուխ իշխ. Կոնստանդին Աբխազի»։

—

Համազգային յոբելեանի Էջմիածնի տօնակատարութիւններին Գանձակի կողմից մասնակցել է տեղական յաջորդ Լեոն վարդապետը։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան հայ ծառայողները հսկ. 13-ին ուղարկել են Էջմիածին հեռաձայն հեռագիրը.

«Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին.

«Թիֆլիսի քաղաքային վարչութեան հայ ծառայողների անունից խոնարհաբար մատուցանում եմ Ձերդ Վեհափառութեան որդիական շնորհաւորութիւններ հայոց գրերի գիւտի և տպագրութեան համազգային տօնի առիթով։ Բաղդաւոր եմ վկայելու, որ հայ ծառայողները խորը գիտակցելով իրանց պարտքը հանդէպ հայ ժողովրդի՝ մտցնում են իրանց լուման Ձերդ Օծութեան կամքով հիմնված զգլոցական ֆոնդի մէջ։ Թոյլ տուէք, Ձերդ Վեհափառութիւն, հայ ծառայողների համեստ զգացումների արտայայտութեանը միացնել և իմ անկեղծ շնորհաւորութիւնները Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամ՝ Մ. Աթաբէկեան»։

—

Զայնաւոր Քանանեանը Թիֆլիսի քաղ. զգլոցական մանուածողովին առաջարկութիւն է արել անուանելու հերթական հայկական տարբական զգլոցը ս. Մեսրոպ և Սահակի անունով՝ հայ տառերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի յիշատակին։